ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2011թ. ,,Պետական բյուջեի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 03 ծրագրի ,,4729 սոցիալական օգնություն դրամական արտահայտությամբ նպաստներ բյուջեից,, հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Մարզպետարանին հատկացված միջոցներից 80000 /ութսուն հազար/ դրամ հատկացնել ս/թ օգոստոսի 17-ին Գավառ քաղաքում կայանալիք Հայաստանի Հանրապետության անկախության 20-րդ տարեդարձին նվիրված ,,Արմենիավիզիոն,, երգի մրցույթի մարզային փուլը անցկացնելու, այդ թվում՝ 40000 /քառասուն հազար/ դրամ համաձայն պայմանագրի տեխնիկական սարքավորումներ վարձակալելու և 40000 /քառասուն հազար/ դրամ՝ մրցույթում հաղթողին դրամական պարգևատրում տալու համար:
2. Մարզպետի խորհրդական Օ. Չիչոյանին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ Գ. Չարվադարյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ